ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Գործուղման մասնակցի անունը, ազգանունը.**
   Ռոբերտ Ալիխանյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**

<<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի տնօրեն

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վրաստանի հանրապետություն, ք. Բորժոմի նոյեմբերի 6-9

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը.)**

Վրաստանի Պահպանվող տարածքների գործակալությունը Global Conservation-ի հետ համատեղ անցկացրեց 1-ին միջազգային գագաթնաժողովը պահպանվող տարածքների մասին:

Գագաթնաժողովի նպատակն էր բարձրացնել իրազեկությունը, կիսվել փորձով և ուսումնասիրել ընդհանուր քաղաքականության խնդիրները՝ կենտրոնանալով բնության վրա, ազգային պարկերի պահպանությանն ու կայուն զարգացմանը՝ առաջնահերթ նպատակ ունենալով լավագույն միջազգային փորձի փոխանակմանը:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- Պահպանվող տարածքների կառավարման մոդելների, հաջողված փորձերի, կառավարման խնդիրների ներկայացում,
- Պահպանվող տարածքների պահպանության ոլորտում իրականացված ռազմավարական քաղաքականությունների, պահպանության ոլորտում հաջողված փորձերի (Սմարթ կառավարում) և մոդելների ներկայացում,
- Պահպանվող տարածքներում էկոզբոսաշրջության զարգացում, մշակված էկոերթուղիների ներկայացում,
- Միջազգային և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից կենսաբազմազանության պաշտպանության և պահպանության ապահովման նախաձեռնությունների և գործողությունների շուրջ կապի ամրապնդմանն ուղղված ջանքերի և ռազմավարության ներկայացում,

6. **Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպման առաջին օրը ներկայացվել է միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից պահպանվող տարածքներին տրամադրված

ֆինանսական և կառավարման ոլորտում խորհրդակցական աջակցության մասին զեկույցներ:
Տեղի է ունեցել «World cafe» ձևաչափով հանդիպում-քննարկումներ, մասնավորապես՝ կառավարման ոլորտում առաջնահերթ խնդիրների վերհանում, կադրային ճիշտ քաղաքականության վարում, հաջորդիվ մասնակից երկրները ներկայացրել են նաև տաղավար-ցուցադրություններ՝ պահպանվող տարածքների վերաբերյալ ինֆորմացիոն բաղադրիչներով:

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում կարևորվեց պահպանվող տարածքների կայուն կառավարման ոլորտում կիրառվող փորձի փոխանակումը, կառավարման ադմինիստրատիվ և արդյունքային մոդելների կիրառումը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Քննարկում-հանդիպումների ընթացքում ընդգծվեց պահպանվող տարածքներում կիրառելի լավագույն փորձերը և գործող լուծումներն՝ ուղղված պահպանվող տարածքներում կառավարման ոլորտում առկա խնդիրներին և խոչնդոտներին:

Կարևորվեց արդյունավետ քաղաքականությունները և միջոցառումները, որոնք իրականացվում են գլոբալ տեսանկյունից՝ ուղղված պահպանվող տարածքների կայուն, արդյունավետ կառավարմանը, կենսաբազմազանության պահպանությանը և պաշտպանությանը:

*Գործուղվող՝* Ռոբերտ Ալիխանյան